ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ , Ա. Խաչատրյան-1, araks.armavir@mta.gov.am, 060 88 77 77

03 հունվարի 2025

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Սիրելի հայրենակիցներ, Արաքս համայնքի հարգելի բնակիչներ, շնորհավորում եմ բոլորիս Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ:

Թո՛ղ խաղաղությունը անխախտ լինի Հայոց աշխարհում:
Թո՛ղ 2025 թվականը միայն առողջության, անձնական երջանկության, բարօրության,ձեռքբերումների և բարի գործերի իրականացման տարի լինի: Մեծ ցավով և ափսոսանքով ենք հիշում մեր երկրի համար իրենց ամենաթանկը՝ կյանքը նվիրաբերած հերոսների հիշատակը: Հավե՛րժ փառք ու պատիվ մեր բոլոր նահատակներին: Թո՛ղ նրանց ընտանիքներում այսուհետ միայն ավետիսներ հնչեն, և թող մեր երեխաները մեծանան խաղաղ երկնքի տակ: Իսկ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին մաղթում եմ ուժեղ կամք և հավատ, մենք ձեր կողքին ենք և շարունակելու ենք անել ամեն ինչ, որ դուք ապրեք ապահով և սիրով շրջապատված հայրենիքում:

Ամփոփելով նախորդ տարին վստահաբար կարող ենք ասել, որ Արաքս համայնքում ունեցանք մեծ ձեռքբերումներ, և բոլորիս համար տարիների երազանք դարձած ծրագրերի իրականացում: Արդյունավետ, համակարգված և նպատակային աշխատանքի արդյունքում մենք կարողացանք դրական տեղաշարժեր ապահովել համայնքի բնակավայրերում, շնորհիվ բոլորիս աշխատանքի, շնորհիվ ձեր վստահության ու նվիրումի:

Համոզված եմ, որ այդ վստահությամբ ու նվիրումով աշխատելու ենք գալիք տարում և հաջորդող բոլոր տարիներին՝ նոր նպատակներ, նոր ծրագրեր կյանքի կոչելու, մեր բոլորի երազած բարեկեցիկ և բարեկարգ Արաքս համայնքն ունենալու համար: Մեկ անգամ ևս շնորհավորում եմ և մաղթում, որ նոր տարին նորություններով, նոր հաջողություններով մտնի յուրաքանչյուրիս ընտանիքը և թող տոնական սեղանների շուրջ իշխեն բարձր տրամադրությունն ու լավատեսության ոգին:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ